ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ։

Ժողովրդական բժշկութեան խնդիրը մեր ժամանակում միշտ լուրջ խնդիրներից է։ Այդ խնդրի նշանակութիւնը դուրս է գալիս անհատական շահերի շրջանից։ Ազգաբնակութեան առողջութիւնը նոյն իսկ պետական խնդիր է։ Մեզանում բժշկական անօգնութեան մատնուած են ոչ միայն գիւղացիները, այլ և նոյն իսկ քաղաքների բնակիչների մեծամասնութիւնը՝ միջին դասակարգի շատ խաւերը և չունևորները։ Տգիտութիւնը այստեղ մեծ դեր է խաղում. բայց ամենից առաջ պատճառը այն է, որ բժշկական օգնութիւնը բաւականաչափ կազմակերպուած չէ։ Կազմակերպութեան խնդիրը դեռ ևս բաց համարելով, ահա՛ բժշկական օգնութեան հնչակաւոր միջոցներից մէկը՝ խմբովին պայմանաւորուել բժշկի հետ։ Ինքն ըստ ինքեան դա նորութիւն չէ նոյն իսկ Կովկասում, բայց այդ միջոցը տարածուած չէ, ի միջի այլոց, և այն պատճառով, որ պայմանաւորուելու ձևը լայտնի չէ ընդհանրութեան։ Այդ դժուարութիւնը վերացնելու համար՝ հրատարակում ենք ներկայ դաշնագիրը, որը կապուած է Բաքու քաղաքի 100 գերդաստանների և մի բժշկի մէջ։ Անուններից թողնում ենք միայն բժշկի և տեղերի անունները։

ԴԱՇՆԱԳԻՐ։ 26 Հոկտեմբերի 1889 ամի, Բաքու։ Մենք ներքոյ ստորագրեալ բնակիչներս Բաքուի՝ (անուններ և ազգանուններ) մի կողմից, և Բաքուի բնակիչ՝ բժիշկ Միքայէլ Տէր-Յովհաննիսեան Տէր-Օհանեանց միւս կողմից՝ միմեանց հետ սոյն դաշնագիրը կապեցինք՝ հետևեալ պայմաններով.

Առաջին՝ մենք (անուններ և ազգանուններ) Բաքուի հայ հասարակութեան հարիւր գերդաստանների ներկայացուցիչների անցեալ սեպտեմբերի 29-ին կազմած համախօսական վճռի զօրութեամբ, որով վիշեալ ներկայացուցիչները մեզ իրանց հաւատարմատար և լանձնախմբի անդամներ կարգեցին, վարձեցինք մեծապատիւ բժիշկ Միքայէլ Տէր-Յովհաննիսեան Տէր-Օհանեանցին տանու բժիշկ՝ մի հարիւր վճարող և քսան և հինգ տուն չը վճարող հայ գերդաստանների համար, մի տարի ժամանակով՝ սկսած ներկայ հազար ութ հարիւր ութսուն և ինն ամի, նոյեմբերի մէկից՝ մինչև մէկն նոյեմբերի, հազար ութ հարիւր իննսուն ամի, ընդ ամենը մի հազար և հինգ հարիւր ռուբլի ռոճիկով, որ նա, բժիշկ Տէր-Օհանեանցը, պէտք է ստանայ մեզնից ամսէ ամիս՝ իւրաքանչիւր ամսում մի հարիւր քսան և հինգ ռուբլի։

Երկրորդ՝ վերոյիշեալ հարիւր քսան և հինգ գերդաստանների և նրանց կազմող անդամների անուանական ցուցակը, տների ճիշդ հասցէով, մեր՝ հաւատարմատարներիս ստորագրութիւնով՝ վաւերացրած՝ լանձնում ենք բժիշկ Տէր-Օհանեանցին ի տեղեկութիւն։

Երրորդ՝ նա, բժիշկ Տէր-Օհանեանցը, պարտաւոր է վիշեալ հարիւր քսան և հինգ գերդաստանների տները ամիսը մի անգամ անպատճառ այցելել՝ հարկաւոր համարած բժշկական խորհուրդ ու խրատը տալու համար։ Բժշկին իրան լարմարութեանն ու կամքին ենք թողնում այցելութիւնների օրերն ու ժամերը նշանակելը, բայց նա ամսական այդ այցելութիւնների համար՝ իրան հարկաւորած կառքի ծախքն իւր գրպանից պիտի հոգայ։

Չորրորդ՝ վիշեալ 125 գերդաստանների տներում, երբ հիւանդութիւն պատահի, հիւանդի տէրը պարտական է բժշկին իմաց տալ և նորան հրաւիրել (բժշկին չը գտնելիս՝ տանը տոմսակ թողնել)։ Եւ պ. Տէր-Օհանեանցը պարտաւոր է այցելել հիւանդին մինչև նորան կատարեալապէս առողջացնելը։ Այս դէպքում հիւանդի տէրը ինքը պիտի վճարէ ամեն անգամ բժշկի կառքի փողը։ Իսկ եթէ չը վճարեց, բժիշկը իրաւունք ունի դիմել լանձնախմբին, որ պարտ ու պատշաճ տնօրէնութիւն անէ։

Հինգերորդ՝ երբ հիւանդի տէրը և կամ ինքը բժիշկ Տէր-Օհանեանցը հարկաւոր համարեցին բժշկական խորհուրդ կազմել (կոնսիլիում), հիւանդի տէրը պարտաւոր է իւր գրպանից վճարել խորհրդի հրաւիրած բժիշկների թէ վարձատրութիւնը և թէ նրանց կառքերի ծախսն։ Խորհրդի հրաւիրող բժիշկների թիւ ու անձնաւորութիւնների որոշումը թողնում է տանու բժշկի և հիւանդատիրոջ կամքին ու փոխադարձ համաձայնութեանը։

Վեցերորդ՝ վերոյիշեալ հարիւր քսան և հինգ տուն գերդաստանների արական սեռի հիւանդներից նրանք, որոց հիւանդութիւնը այնպիսի է, որ կարող են մահ գալ (ամպուլատորիի հիւանդները), իրաւունք չ'ունեն բժշկին իրանց տուն հրաւիրել, այլ իրանք պարտական են այցելել նորան նորա բուժարանում, որ գտնում է Օլգինսկի փողոցում, Սադիզ Զաքիեի տանը, ամենայն օր, կէս օրուայ 5 ժամից մինչև 6 ժամը։—Այս կանոնից կարող է բացառութիւն լինել այն ամպուլատորիի հիւանդի համար, որ լարգելի պատճառով ցանկանում է բժշկին իւր տունը հրաւիրել։ Եւ այսպիսի բացառիկ դէպքերը բժիշկը պարտաւոր է լարգել։

Եօթներորդ՝ եթէ բժիշկ Տէր-Օհանեանցը կամ ակարութեան կամ բացակայութեան պատճառով անկարող եղաւ իւր պարտականութիւնները մի առ ժամանակ կատարել, նա պարտաւոր է մի ուրիշ բժշկի, որին ինքը ուզում է, լանձնարարել այդ պարտականութիւնների անթերի կատարումը։—Այդ դէպքում պ. Տէր-Օհանեանցը պարտական է գրաւոր կերպով տեղեկութիւն տալ լանձնախմբի նախագահին։

Ութերորդ՝ բժիշկ Տէր-Օհանեանցի պարտաւորութիւնները, վերաբերութեամբ վիշեալ 125 գերդաստանների, տարածւում են միմիայն Բաքւում գտնւող ընտանիքների և հիւանդների վերայ, իսկ երբ վիշեալ գերդաստանից այս և այն գերդաստունը կամ գերդաստանի այս կամ այն անդամը,

կամ ժամանակաւորապէս կամ մշանջենապէս Բաքուից հեռու է գտնում,— նա իրաւունք չ'ունի, մինչև քաղաք վերադառնալը, օգտուել տանու բժշկից։ Իսկ երբ նորանից օգտուել է ուզում, պէտք է մասնաւոր համաձայնութիւն կայացնէ իւր և նորա մէջ, արդէն իբրև մասնաւոր բժշկի հետ։ Բաքուից դուրս համարուած տեղերն են՝ Սև քաղաք ու Բալիլով արուարձաններն, նոյնպէս և Բալախանայ, Մաշտագայ, Բղմնայ, Մարդաքան, Շիվալան և միւս ամարանոցներն։

Իններորդ՝ եթէ մինչև պայմանեալ տարին լրանալը՝ լիչեալ 125 գերդաստաններից Բաքուից դաղթողներ եղան,—դորանով տանու բժշկի ուճիկը ոչ մի փոփոխութեան չը պիտի ենթարկուի։ Իսկ եթէ նոր ընտանիքներ կամեցան ընկերակցել 125 ընտանիքներիս հետ և օգտուել մեր վարձած տանու բժշկից,—բժիշկ Տէր-Օհանեանցը իրաւունք ունի պահանջել լանձնախմբից՝ իւրաքանչիւր այդպիսի աւելացած գերդաստանի համար՝ քսան և հինգ ռուբլի տարին, հաշուելով այն ընկերակցողի մնած ամսից մինչև պայմանեալ տարին լրանալը։

Տասներորդ՝ մի բնակարանից միւսը փոխադրուելիս՝ իւրաքանչիւր գերդաստան պարտաւոր է ամեն անգամ իմաց անել թէ տանու բժշկին և թէ լանձնախմբի նախագահին իւր նոր բնակարանի փողոցը և տան համարը։

Մետասաներորդ՝ եթէ 125 գերդաստաններից այս կամ այն գերդաստունը որ և է տրտունջ կամ դանդատ ունի տանու բժշկի դէմ, նա պարտաւոր է միմիայն լանձնախմբին դիմել իւր դանդատով։ Եւ լանձնախմբի արած որոշումով պիտի բաւականանալ։ Հակառակ դէպքում, եթէ այդ գերդաստունը կամ նորա այս և այն անդամը թոյլ տուց իրան կոպտաբար վարուել բժշկի հետ, կամ աւելորդ, անտեղի ու անհնարին պահանջներ անել նորանից,—որպէս մի վարձկանից,—այդպիսին, ըստ որոշման լանձնախմբի, զրկուում է տանու բժշկից օգտուելու իրաւունքից, չ'ունենալով մի և նոյն ժամանակ իրաւունք լեռ ստանալ լանձնախմբից իւր վճարած 15 ռուբլին կամ նորա մի մասը։

Երկոտասաներորդ՝ լանձնախմբի հետ ունեցած գրաւոր պայմանի զօրութեամբ (6-ն հոկտեմբերի 1889 ամի) դիղավաճառ Էլիսերը լանձն է առել հարիւր տուն վճարող գերդաստանների հիւանդներին հարկաւորուած դեղերը բաց թողնել հարիւրին քսան զիջումով, իսկ քսան և հինգ տուն չը վճարող աղքատ գերդաստանների հիւանդների համար լատկացրուել է երկու հարիւր ռուբլի մի տարուայ համար։ Ուստի սոյն դաշնագիրը ստորագրելիս՝ լանձնախմբի կողմից լանձնուում է բժիշկ Տէր-Օհանեանցին իւր անունն, ազգանունն ու բնակարանի հասցէն ցոյց տուող դեղատոմսի պատրաստի տպագրեալ թերթերը։—Վերոյիշեալ հարիւր քսան և հինգ տուն գերդաստանների համար դեղ գրելիս՝ բժիշկ Տէր-Օհանեանցը պարտական է նախ այդ թերթիկների վերայ գրել անպատճառ իւր դեղատոմսերն և երկ-

բորդ՝ հիւանդասիրոջ ուղղել, առանց ստիպման, դեղավաճառ Էլիլերի մօտ։ —Եթէ դեղատոմսը գրւում է ցուցակում լիշած քսան և հինգ չը վճարող ընտանիքների համար՝ բժիշկ Տէր-Օհանեանցը պէտք է դեղատոմսի ճակատին աւելացնէ «աղքատ» բառը լատին լեզուով։

Երեքտասաներորդ՝ բժիշկ Տէր-Օհանեանցն լանձն է առնում հաւատարմատարներիս հետ, կամ մեզնից այս կամ այն ոքի հետ, երեք ամիսը մի անգամ դնալ Էլիլերի դեղատունը և ստուգել թէ 25 տուն աղքատ գերդաստանների Էլիլերին լատկացրած երկու հարիւր ռուբլի գումարից ո՞րքանի դեղ է բաց թողած և դեռ ո՞րքան գումար մնում է։

Չորեքտասաներորդ՝ եթէ լանձնախումբը հարկաւոր համարեց և հրաւիրեց բժիշկ Տէր-Օհանեանցին և վերջնոյս ժամանակը ներեց՝ նա լանձն է առնում ժամանակ առ ժամանակ ժողովրդական դասախօսութիւններ կարդալ առողջապահութեան կամ բժշկականութեան այս ու այն մասի վերաբերութեամբ։ Այդ դասախօսութիւններից ժողովւած գումարն, ի բաց առնելով նորանից աֆիշի և լուսաւորութեան ծախքերն, պիտի տրւի բժշկին իբրև վարձատրութիւն իւր դասախօսութեան։

Հնգետասաներորդ՝ սոյն դաշնագրից հարիւր քսան և հինգ օրինակ պէտք է տպագրած և բաժանած ամեն մի գերդաստանի, որպէս զի իւրաքանչիւր գերդաստան իմանայ իւր պարտքն և իրաւունքն։

Վեչտասաներորդ՝ այս դաշնագիրը՝ գրւած պատշաճաւոր դրւատաւոր թղթի վերայ՝ մինչև պայմանեալ մի տարի ժամանակի լրանալը՝ սուրբ և անքակտելի պիտի մնայ երկու կողմից։—Սոյն դաշնագրի մէկ օրինակը պահւում է հաւատարմատարներիս մօտ, իսկ միւս օրինակը բժիշկ Տէր-Օհանեանցի մօտ։

Նախագահ լանձնախմբի՝ (այս ինչ)։

Անդամներ՝ (չորս անդամների անուններ և ազգանուններ)։

Բժիշկ Միքայէլ Տէր-Յովհաննիսեան Տէր-Օհանեանց։